ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀԱՄԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԽՈՐԵՆՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ,
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ,
ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ
ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Գոհութիւն և փառք նախախնամող մեր Աստծուն, որի կենարար հովանու ներքոյ, շէն ու պայծառ մեր աղօթքի Տները Սուրբ Հոգու շնորհներն են բաշխում մեր հաւատաւոր ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Երշանիկ ենք հաստատելու, թէ մեր երշանկայիշատակ եկեղեցական հայրերի հեղինակած ու կարգաւորած պաշտամունքային և սրբական պատարագի արարողութիւնները մեր օրերին առաւել քաղցրանում ու ներշնչիչ են դառնում բազմաձայն ներդաշնակ երգեցողութիւններով: Սրբական երաժշտութիւնը ա-

ռանձին հմայք ու հոգեպարար շունչ է հաղորդում աղօթքի խօսքին: Այդպիսին է մանաւանդ մեծն Կոմիտաս վարդապետի պատարագի երաժշտութիւնը, գնահատուած թէ մեր ժողովրդի և թէ այլազգի երաժշտագէտների կողմից իբրև բարձրարուեստ ստեղծագործութիւն: Մեր եկեղեցում սիրուած ու գնահատուած է նաև Մակար Եկմալեանի պատարագը՝ քաղցրօրէն հնչող մեր եկեղեցիների կամարների ներքև:

Այսօր, Մենք մի բարի լուր ունենք բերելու բոլորիդ, որ մեր Եկեղեցին հարստացաւ պատարագի նոր յօրինուած մի երգեցողութեամբ, որի հեղինակն է շնորհալի երաժիշտ, երկար տարիներից ի վեր Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հմուտ խմբավար Խորէն Մեյխանեջեանը:

Երեք տարիների տքնաջան աշխատանքի արդիւնք է սոյն գործը, յօրինուած հայ հոգևոր երաժշտութեան ոգով, ազգային մելոսի զգացողութեամբ և հարազատ մեր եկեղեցական աւանդներին ու հոգևոր մթնոլորտին:

Մենք մօտիկից հետևած լինելով պատարագի սոյն երգեցողութեան ստեղծագործական ընթացքին և տեղեակ դառնալով Հայաստանի հեղինակաւոր երաժշտագէտների բարձր գնահատանքին, այսու Մեր կոնդակով արտօնում ենք և յանձնարարում մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին ու հոգևոր հովիւներին, որ սոյն գործը ընդունելի տարբերակ նկատուի ցարդ նուիրագործուած՝ պատարագի երգեցողութեանց շարքին և կատարուի Հայաստանեայց եկեղեցիներում իբրև խորէնեան պատարագ:

Մենք շնորհաւորում ենք հեղինակին և օրհնում նրա երաժշտական տաղանդի սոյն արգասիքը:

Թող հայոց աղօթքի Տներում յաւերժ ապատ ու լուսաւոր հնչի սուրբ խօսքն ու երգը մեր աննման պատարագի խորհրդի:

«Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում, սաղմոս ասացէք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ» (Սաղմ. ԽԶ 7—8): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Հոկտեմբերի
1984 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1332